

## **Գեղարքունիքի մարզպետը խրախուսեց բուժաշխատողներին**

21.08.2015

Ծառայողական պարտականությունները բարեխղճորեն կատարելու և մասնագիտական բարձր հմտությունների համար օգոստոսի 21-ին Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը ՀՀ Գեղարքունիքի մարզպետի շնորհակալագրով և փոքրիկ հուշանվերով խրախուսեց Գեղարքունիքի մարզի «Մարտունու բժշկական կենտրոնի», ՊՓԲԸ բուժաշխատողներ՝ Մանուկ Երիցյանին, Ազատուհի Սեդրակյանին և Գոհար Բարսեղյանին: Բժիշկները շնորհակալություն հայտնեցին մարզի ղեկավարին ուշադրության արժանացնելու համար, միաժամանակ պարտավորվեցին ծառայել համբերատար և բարեխիղճ, արժանավայել կերպով կատարելով իրենց առջև դրված պարտականությունները: